ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025Թ ՄԱՐՏԻ 24-28-Ը ՇՎԵՅՑԱՐԻԱ (Ք.ԺՆԵՎ)
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. **<u>Անունը, ազգանունը՝</u>**

Ժենյա Տեր-Վարդանյան

2. **<u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>**

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության բաժնի պետ

3. **<u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>**

2025թ մարտի 24-28-ը Շվեյցարիա (ք.Ժնև)

4. **<u>Հրավիրող կողմը.</u>**

IATA ուսումնական կենտրոն

5. **<u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>**

Բաժնի գործառույթների կիրառում, այն է՝ ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության կազմակերպումը, տեղեկատվության հավաքումը և վերլուծությունը, եզրակացության նախապատրաստումը՝ ներառյալ պատճառների և (կամ) ուղեկցող գործոնների բացահայտումը:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունվարի 24-ի «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության ձեռնարկը հաստատելու մասին» N 06-Լ հրամանով հաստատված «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության ձեռնարկի» կիրառում:

6. **<u>Քննարկված թեմաները.</u>**

Քննարկվել են ավիացիոն իրադարձությունների հիմնապատճառների վերլուծության սխալները, ավիացիոն խնդիրների լուծման գործիքակազմը, ավիացիոն խնդիրների սահմանում և դրա գործիքակազմը, ավիացիոն խնդիրների պատճառների տվյալների հավաքագրման գործիքակազմը, հիմնապատճառների վերլուծության գործընթացը և

դրա գործիքակազմը, արդյունավետ վերլուծություն իրականացնելու քայլերը, ուղղիչ գործողությունների պլանի մշակում, իրականացում և մշտադիտարկում, միջազգային կազմակերպությունների (ICAO, EASA, FAA, Transport Canada, IATA) պահանջները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Դասընթացի մասնակցություն, ելույթներ, բազմաթիվ շնորհանդեսների ներկայացում, դասախոսական կազմի և ավիացիոն այլ մասնակիցների հետ քննարկումների մասնակցություն:

8.**Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հիմնապատճառների վերլուծության գործիքակազմի կիրառում:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունվարի 24-ի «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության ձեռնարկը հաստատելու մասին» N 06-Լ հրամանով հաստատված «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության ձեռնարկի» լրամշակում:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**

02.04.2025թ.